2 (20) 2009

ՀՏԴ 582. 736 *Կենսաբանություն*

ԲԱԿԼԱԶԳԻՆԵՐ /FABACEAE/ ԸՆՏԱՆԻՔԻ COLUTEA, ASTRAGALUS, GENISTA ՑԵՂԵՐԻ ՏԵՍԱԿԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԼՂՀ-ՈՒՄ

Կ. Վ. Բալայան

ԼՂՀ ֆլորայի ուսումնասիրության և պահպանության անհրաժեշտությունն անմիջականորեն բխում է շրջակա միջավայրի պահպանության գլոբալ հիմնախնդիրներից: Ընդ որում, բուսական պաշարների պահպանության հիմնական խնդիրը բուսական աշխարհի տեսակային բազմազանության ամբողջության ապահովումն է: Սույն աշխատանքում ներկայացվում է ծածկասերմերի /Angiospermae/ գերդասակարգի ընտանիքներից մեկի՝ բակլազգիների/Fabaceae/ ընտանիքին պատկանող Պայթակենի/Colutea/, Գազ/Astragalus/, Դեղնածաղիկ/Genista/ ցեղերի տեսակային բազմազանությունը և տարածվածությունը ԼՂՀ-ում:

Նշված ընտանիքին պատկանող ցեղերի տեսակային կազմի վերլուծության համար հիմք են հանդիսացել մեր կողմից կատարված բուսաբանական ուսումնասիրությունները, դաշտային հետազոտությունները ու բուսանմուշների հերբարիումային հավաքները, որոնք ներկայացված և գրանցված են ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի քարձրակարգ բույսերի կարգաբանության բաժնում:

Բակլազգիների / Fabaceae, Leguminosae/ ընտանիքն ընդգրկում է շուրջ 500 ցեղի պատկանող ավելի քան 12հազ. տեսակներ, որոնք տարածված են երկրագնդի ամենատարբեր բուսաշխարհագրական մարզերում: Կովկասում հանդիպում են շուրջ 550 տեսակ, որոնք տերևաթափ և մշտադալար ծառեր, թփեր, կիսաթփեր ու լիաններ են, միամյա, բազմամյա խոտաբույսեր/1/:

Սույն աշխատանքում նշված Պայթակենի ցեղն ընդգրկում է մոտ 15տեսակ՝ տարածված Հարավային Եվրոպայում և Ասիայում: Հայաստանում բնականորեն աճում է պայթակենու 3 տեսակ՝ Պ.արևելյան/C.orientalis Mill/, Պ.կիլիկյան/C. cilicica Boiss. et Bal. /, Պ. կոմարովի/ C. Komarovii Takht.// 2/:

Նկ.1 Պ. կիլիկյան/C.cilicica Boiss et Bal./

ԼՂՀ տարածքում մեր կողմից կատարված բուսաբանական ուսումնասիրությունների և դաշտային հետազոտությունների ընթացքում գրանցվել է Պ. կիլիկյան/C.cilicica Boiss. et Bal./ տեսակը/նկ.1/, որը տարածված է հանրապետության ստորին և միջին լեռնային գոտիներում: Բուսանմուշները հավաքվել են Հադրութի, Ասկերանի, Մարտունու, Ծուշիի շրջանների տարածքներից, մշակվել, որոշվել և հերբարիումային նյութը ներկայացվել է ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի բարձրակարգ բույսերի կարգաբանության բաժին:

Պայթակենին տերևաթափ թուփ է, կենտ փնտրաձև տերևներով: Ծաղիկները ծոցային են, խոշոր, դնիկ՝ հավաքված ողկույզներում: Ծաղիկները բացվում են մայիս-օգոստոս ամիսներին: Պտուղն ունդ է՝ բշտիկանման, կիսաթափանցիկ և բազմասերմ: Պտուղները հասունանում են հուլիս-հոկտեմբեր ամիսներին: Պայթակենին չորադիմացկուն է, լուսասեր և ջերմասեր: Աճում է չոր, քարքարոտ լեռնալանջերին:

Հայաստանի բուսական աշխարհում տարածված հանդիպող գազի /Astragalus/ ավելի քան 100տեսակներից 15-ը հանդիսանում են թփեր, երբեմն՝ կիսաթփեր, որոնք մասնակցում են արիդային գոտու դենդրոֆլորայի ձևավորմանը /2/: Գազերը չափազանց չորադիմացկուն են, լուսասեր, հողի նկատմամբ քիչ պահանջկոտ: Հիմնականում տարածված են չոր լեռնալանջերին, բնորոշ են լեռնաչորասեր բուսական տարբեր խմբավորումների կազմում /3/:



Նկ.2 Գ. մանրագլխիկ
A. microcephalus Wild/

ԼՂՀ տարածքում առավել տարածված են Գ. մանրագլխիկ/ A. microcephalus Wild//նկ.2/, A. fragrans Wild, A. macrostachus, A. canallatus Bunge տեսակները: Նշված բուսատեսակների հերբարիումային նմուշները, որոնք հավաքվել են Ասկերանի, Շուշիի, Քաշաթաղի շրջանների տարածքներից, գրանցված են ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի կարգաբանության և բարձրակարգ բույսերի աշխարհագրության բաժնում:

Թփանման գազերը լայն տարածում ունեն և օժտված են բարձր տնտեսական արժեքով: Դրանց ցողունը և ճյուղերը պարունակում են թանձր խեժ, որն արևոտ և շոգ օրերին արտահոսում է բույսի վերքերից: Գազի խեժը կարևոր նշանակություն ունի արդյունաբերության մի շարք ճյուղերի համար: Օգտագործվում է նաև բժշկության մեջ/ 4/:

Հայաստանի և Ադրբեջանի ֆլորայում հայտնի են Դեղնաներկիչ կամ Օրոճ /Genista/ ցեղին պատկանող 2 տեսակ՝ O. ներկատու/G. tinctoria/ /նկ. 3/ և O. անդրկովկասյան/G. transcaucasica/ /1,4/: Նշված տեսակները տարածված են նաև ԼՂՀ տարածքում /Հադրութի, Քաշաթաղի, Շուշիի շրջաններ/: Հանդիպում են հանրապետության ստորին և միջին լեռնային գոտիներում: Աճում են անտառների բացատներում, թփուտներում, գետերի և գետակների ափերին: Ներկատու /պարունակում են դեղին ներկանյութեր/ և դեղատու են, ինչպես նաև գեղազարդիչ/5/:

Նկ.3 O. ներկատու
G. tinctoria

Резюме

В данной работе представлен видовой состав и распространение в НКР Пузырник/Colutea/, Астрагал /Astragalus/, Дрок /Genista/ родов одного из преобладающих семейств покрытосеменных – семейства бобовых/Fabaceae/.

Գրականություն

1. И. И. Карягин, Флора Азербайджана, 5 том, Баку, 1954.
2. Ժ. Հ. Վարդանյան, Ծառագիտություն, Եր., էջ 167-1762005
3. Ս. Ա. Բալոյան, Հայաստանի կենսաբազմազանություն, Եր., 1999:
4. Հ. Մ. Այվազյան, Հայաստանի բնաշխարհ, Եր., 2006:
5. Я. Мацку, И. Крейча, Атлас лекарственных растений, Братислава, 1972.